№ 44 1877 ՇԱԲԱԹ 12 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 44

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՆ 10 ՄԻՋԱԿ ՏՈՂԵՐԻ ՎՃԱՐՆ Է 1 ԿՈՊԷԿ:
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ՕՐ ՄԻ ԹԵՐԹ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 6 Ռ.
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Въ редак. газеты „Пчела Арменіи".

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ 12-ԻՆ ՆՈՅԵՄԲԵՐԻ

Խմբագրութիւնս Պլեվնայի պէս անխնայ անդադար ռմբակոծվում է յօդուածներով, որոնք վերաբերում են Արարատ ամսագրի ուղղութեան և նորա յօդուածների քննութեան: Մենք չունինք ինչ ասելու այդ յօդուածների բովանդակութեան և հայեցուածքների մասին, որոնք ընդհանրապէս ուղիղ են և ճիշդ. միայն հրատարակել ենք և հրատարակելու ենք շատ քչերը նրանցից, որովհետև եթէ յիրաւի ուշք դարձնելու լինէինք առանձնապէս Արարատի բովանդակութեան և նորա յօդուածների ուղղութեան վերայ և քննելու լինէինք նրանց— հարկ կլինէր մեր լրագրի նշանաւոր մասը լցնել այդ աննպատակ և խորհրդաւոր ուղղութիւնից զուրկ օրագրի յօդուածների քննութիւններով, որ չէր կարող լցուցանել ընթերցողաց փափագն և հետաքրքրութիւնը: Բայց և այնպէս անհնարին է առանց ուշադրութեան թողնել նորա այն յօդուածներն, որոնք խոշոր սխալներ ունին և մեծամեծ վնասներ կարող են հասցնել թէ Հայ եկեղեցուն և թէ ազգին:

Այս տեսակներից են վերջին ժամանակ պ. Վ. Ե. Մ. ստորագրութեամբ յօդուածներն, որոնք լինելով, կարծես, լոկ կրից և շահասիրութեան պտուղներ, շատ վնասակար են:

Այսպիսի է Արարատի մայիսի տետրում «Եպիսկոպոսութիւն և Եպիսկոպոսունք» յօդուածն, ուր պարոն Թէ Հայր Վ. Ե. Մ. յօդուածագիրը ցոյց տալով եպիսկոպոսութեան նշանակութիւնն ու եպիսկոպոսի պարտաւորութիւնքը, դնում է պատիժներ, որոնք պէտք է տրվին իրանց պաշտօնի դէմ մեղանչողներին— առանց յիշելու, որ այդ պատիժները պէտք է լինին հետևանք արդար քննութեան— այդ յօդուածն եպիսկոպոսների շարքից հանում է Հայրապետներին, պատրիարքներին և կաթողիկոսներին, որոնք կարծես չեն պատկանում մահկանացուների շարքին և չեն ենթարկվում քննութեան և դատապարտութեան, դէթ բարոյապէս:

Յօդուածագիրը սրանով մեղանչում է Հայ կաթողիկոսների և պատրիարքների պատւոյն դէմ— նրանց մարդոց շարքից հանելով և անմեղանչական Հռոմայ պապերի և Բուդդայականների Դալայ—լամաների շարքը դասելով: Այսպիսի պատիւ ոչ մի Հայ Պատրիարք կամ Կաթողիկոս ոչ պահանջած է և ոչ էլ ցանկացած. քանի նոքա իրանց պատիւը մեղանչական մարդոց շարքումն են որոնել. քանի նոցա պատիւը կայացել է Հայ ժողովրդական եկեղեցու գլխաւոր կարգապահ լինելու մէջ: Քանի նոցա յարգանքը իւրեանց պաշտօնի սրբութեամբ կատարելում և ազգի ու եկեղեցու օգտի համար ձգնելում և նահատակվելումն է եղած և ոչ վերացական և սխալ իրաւաբանական ճանապարհով սահմանած անսխալականութեան մէջ: Հայ պատրիարքի և կաթողիկոսի անսխալականութիւնը իւր գործերի անսխալականութեան մէջ է եղած և պիտի լինի Հայ եկեղեցու հոգւով— և ոչ նորա անուան կպցրած «անսխալ» տիտղոսի մէջ:

Մտածե՞լ է արդեօք պ. Թէ Հ. Վ. Ե. Մ. որ այդ անսխալականութեան շնորհքը մասն առ մաս ապագայում անցնելու է և Հայ կղերի միւս անդամներին, որով Հայ եկեղեցին դառնալու է բոյն մի վնասակար և կործանիչ կղերականութեան: Այժմ ո՞վ է Հայ եկեղեցու ոչ միայն վարչութիւնն, այլ և նորա ոգին յեղաշրջողն ու սորա դէմ մեղանչողն. Վ. Ե. Մ. ի՞նքը և իւր նմանները— թէ Հայ երիտասարդներն ու խմբագիրները և այլն:

Այս յօդուածից աւելի զզուելի և չար դիտաւորութիւն բովանդակող է Արարատի յուլիս ամսի տետրակի առաջնորդող յօդուածն, որ նկարագրում է Հայ եկեղեցու և ազգի վիճակը: Այս յօդուածի մէջ պ. Թէ Հ. Վ. Ե. Մ. անզուսպ բերանով և անխիղճ դատողութեամբ ազգի և Հայ եկեղեցականաց մէջ վարակված ախտերը բաց անող և նոցա դարմանի համար ձգտող Հայ երիտասարդներին և ուսումնականներին աշխատ է լինում ազգի աչքում վնասակար, եկեղեցու վարչութիւնը տապալել ցանկացող անձինք ցոյց տալ: Նա չէ քաշվում նրանց մինչև անգամ դաւաճաններ կոչել: Նա չէ պատկառում մինչև անգամ այդ երիտասարդներից ոմանց գէթ պաշտօնի անուամբ կոչել յիշելով ուսուցիչներին և խմբագիրներին: Մենք ևս իբրև մինը նոցանից թէ իբրև ուսուցիչ ազգի մանուկների և թէ իբրև խմբագիր բողոքում ենք Վ. Ե. Մ.—ի անպատկառ գրութեան դէմ և յայտնում, որ Հայ ուսուցիչներից և խմբագիրներից ոչոք դաւաճանած չէ Հայ ազգին, հակառակ իւր համոզմանց վարված չէ իւր ազնիւ գործունէութեան մէջ— մինչդեռ այդպիսիք եղած են և՛ վերջին ժամանակներում Հայ եկեղեցականաց մէջ. որոնց անշուշտ լաւ կճանաչէ և ինքը Վ. Ե. Մ.: Իսկ ինչ կը վերաբերի ուսումնականների և խմբագիրների երբեմնապէս յարձակելուն մի քանի Հայ եկեղեցականաց (ոչ եկեղեցականութեան) վերայ— դա ոչ թէ դաւաճանութիւն չէ, այլ և ազգի և եկեղեցու շահերի պաշտպանութիւն: Մենք կարծում ենք, որ նոյն իսկ այդ յարձակմանց ենթակայ եղող Հայ եկեղեցականն այնքան չի վրդովվում, որքան Վ. Ե. Մ., քանի այդ եկեղեցականը— Հայ եկեղեցու պաշտօնեայ լինելով— երբէք իրան սխալական մարդոց շարքից դուրս չէ համարում և ազատ քննութիւնից: Նա սովոր է և պէտք է լինի սովոր, թէ պախարակումն հեզութեամբ ընդունելու իւր անարժան գործի համար, և թէ գովասանութիւնը իւր արժանաւոր գործի համար— սա իսկ մարդկային դերը է: Իսկ Հայ ուսումնականն և խմբագիրը, որքան գիտեն հալածել և պախարակել իւրեանց անարժան եկեղեցականների գործերն, առաւել ևս գիտեն յարգել, սիրել և պաշտպանել մինչև ի մահ իրանց եկեղեցու և ազգի արժանաւոր և ճշմարիտ Հայ եկեղեցական պաշտօնեային: Կարո՞ղ է արդեօք Վ. Ե. Մ. ցոյց տալ մի մինչև անգամ ոչ կատարեալ, այլ աննշան պակասութիւններով մի Հայ եկեղեցական, որին անխտիր, թէ ուսուցիչն թէ խմբագիրն և թէ ազգի այլ անդամներն Աստծու պէս պաշտած և սիրած չը լինին ու խնայած լինին նրանից թէ ապրուստ և թէ յարգանք: Դժուար թէ Հայ ազգի մէջ լինին որև է դասակարգի անդամներ, որոնք ազգի կողմանէ այնքան ներողամտութիւն տեսնելիս լինին, ինչպէս Հայ եկեղեցականաց դասը: Արժանաւոր Հայ եկեղեցականն երբէք իւր պատիւը չէ կորցրել և չի կորցնիլ Հայ ազգի ամեն անդամների աչքում, ինչպէս և Հայ եկեղեցականութեան նշանակութիւնն երբէք չէ ընկնիլ, եթէ անարժանները իրանց վարքը

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՄԵՐ ԿԱՆԱՆՑ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ։

Դիտողութիւն

(Շարունակութիւն)

Ո՞վ ժամանակ ունի թուել այն չարիքը, որ բանի ամուսնութիւններից են առաջ գալիս: Մենք բանի ենք անուանում ոչ միայն այն ամուսնութիւնը, ուր ամուսնացեալներն իրանց ծնողաց կամքին են հնազանդել, այլ և այն ամուսնութիւնը, ուր թէ և ամուսնացողները յայտնապէս միմեանց չեն մերժել, բայց այդ նորա համար միայն, որ իրար ճանաչելու (այդ ժամանակն էլ բանը բանից անցած է լինում) ոչ էլ իրար մերժելու հնար չեն ունենում, վասն զի եկեղեցում հանդիսաւոր կերպով, թէև առանց գիտակցութեան, մէկն ասել է «Տէր եմ», միւսն. «հնազանդ եմ»: Այդ խօստումը քանդելը դիւրին չէ: Դորա հետ միացրու և քաղաքական օրինաց պահանջները: Դոցա վերայ աւելացրու և հասարակաց կարծիքի ազդեցութիւնը և աւանդական սովորութիւնը: Այն ժամանակ ով կհամարձակի ասել «ես քեզ ճանաչեցի, էլ քեզ չեմ ուզում. դու քեզ համար, ես ինձ համար: Ուզես չուզես, պէտք է սիրես. կամ ասենք. սիրես չսիրես, պէտք է պահես: Բայց վայ այն պահելուն:

Պատահում էլ է այն, որ աղջիկն ու տղան ծածկաբար իրար հետ ծանօթութիւն ունենալով, միմեանց հաւանում և առնում են: Բայց սոքա ևս չունենալով օրինաւոր կրթութիւն, չեն կարողանում իրար կշռել, բաւականանում են նորանով միայն, որ աղջիկն ասում է. «ես քեզ սիրում եմ. ինձ առ, քեզ համար գուրբայ, պաճիճ, չալվար ու չուխայ կը գործեմ»: իսկ տղան ասում է, «ես էլ քեզ եմ սիրում. գլուխս կծախեմ քեզ համար դիբիայ, չարղաթ, արխալուղ ու չափիկ կառնեմ. վարդի պէս կը պահեմ քեզ. չեմ թողնի որ ոտդ քարին դիպչի»:

Այս փոխադարձ պայմաններով էլ բանը գլուխ է գալիս: Այստեղ ևս ճաշակն ու երևակայութիւնը, աչքն ու սիրտն են բան տեսնողները: Սոքա զուցէ բաղդաւոր կլինէին.

Բայց ինչ անես. նզովեալ լինի աղքատութիւնը: Խեղճ ամուսիններին վաղ թէ ուշ կարմրացնում է միմեանց դէմ: Մարդը չէ կարողանում ձեռք բերել հարկաւոր դրամը խոստացած կերպով կնոջ սիրտը շահելու համար. կինը բուրդ չէ ճարում որ իւր ասած հագնելիքը պատրաստէ. քանի մի տարուց յետոյ, մի քանի երեխաներ էլ աւելանում են. ծախսը գնալով շատանում է. տանջանքն ու չարչարանքը հետզհետէ խստանում. ցամաք հաց ճարելն էլ է դժուարանում: Մի կողմից արքունի հարկը, միւս կողմից պարտատէրերը, մի երրորդ կողմից տնական պահանջները ստիպում են նոցա մոռանալ իրանց խոստումը: Մարդն այն ժամանակ պահում է կնոջը չէ թէ վարդի պէս, ինչպէս խոստացել էր, այլ թէ ինքը, թէ կինը բանում են ամբողջ օրը գրաստի պէս, և այնու ամենայնիւ, կերածնին ցամաք հացն է, հագածնին հազարաւոր կարկատաններից շուլալած ցնցոտիները, պարկում են հողի վերայ, գլխներու տակը բարձի փոխանակ մի քարի կամ փայտի կտոր դնելով, վերմակն էլ իրանց ցնցոտիները ծածկելով և կամ շատ շատ մի ցնցոտի անկողնում, ուր չունին էլ չի քնիլ: Այս դառն ապրուստից ազատուելու յուսով, մարդը թողում է իւր կինն ու երեխաները. գլուխ է առնում երկրէ երկիր թափառում որ գոնէ օտարութեան մէջ մշակութիւնով կարողանայ ձեռք բերել հարկաւոր ստակը, որով կարողանայ ազատել պարտատիրոջ տանից իւր կնոջ պսակի զգեստը, ճակատի, դոշի և թևերի զարդը. տան պղնձեղէնն ու անկողինը, որը տարել է պարտատէրը, կամ գիւղի տանուտէրը՝ թագաւորական հարկի փոխարէն: Խեղճ կինը, մարդու կարօտը սրտումը, արտասուքն աչքերում, գիշեր ու ցերեկ մշակութիւն է անում, սորա ու նորա տանը. որպէս զի կարողանայ իւր երեխանց մերկութիւնը ծածկել և քաղցը յագեցնել գոնէ ցամաք հացով: Եւ քանի՜ հարիւրաւոր ու հազարաւոր ընտանիք կան, որ այդ դրութեան և այդ վիճակի մէջ մաշում են իրանց միտքը, հոգին ու մարմինը: Ո՛վ գիտէ, զուցէ այդ իրան կամքով ամուսնացած կնոջ ազգականներն ու բարեկամները էլ հեռուից նայում ու ժպտում են և ասում «դէ գնա հիմի, թող ջանդ դուրս գայ. ջանջղ. քո խելքով մարդ ջոկեցիր. դէ հիմի ապրի. որ մեզ լսէիր խօ հիմի էդպէս չէիր լինիլ. չարչարուիր, մեռիր, որ ուրիշներն էլ քեզ տեսնելով, չհամարձակուին իրանց խելքի կտրած մարդին ուզել. այլ հօր, մօր, ու ազգականների հաւանածն առնեն և ծնողներին էլ գլխադրից ու կամենադրից չզրկեն, մի պլուտի կին դառնալով: Բայց կինը նրանց անշուշտ կպատասխանէր. «Էհ, իմ քրոջս էլ հրէն ձեր խելքով տուեք մի հարուստ մարդի, ամա որ մինչև իրիկուն արտասուքը նորա աչքերից էլ չի պակասում իմի պէս. տուած է իւղ ու մեղրը չան տկումն: ինձ ինչ օգուտ: Նա էլ հրէն իւր մարդին չի սիրում. օրը մին է, նրա ծեծը հարիւր: Ես լաւ է գոնէ իմ մարդին սիրում եմ. սրտումս մի միխիթարութեան քունջ գոնէ կայ. նա ինչ ունի. չէ. լաւ է աղքատ լինիմ ու սիրեմ, քան թէ հարուստ լինիմ ու ատեմ: Այո, կան և այնպիսիները, որ ասում են, էհ փորս կուշտ լինի, հաղուստս նոր, ջահաննամը թէ մարդս ինձ չի սիրիլ ուրիշին կսիրէ: Ես էլ կուտեմ, կխմեմ, կը հագնեմ, կը մաշեմ, տեղն ընկած տեղն էլ քէֆս կանեմ, թող նա էլ իրան քէֆն անէ: Ճշմարիտ է այսպիսիների թիւը Հայ կանանց մէջ խիստ քիչ է, այս պէտք է ասել ի պատիւ նոցա. բայց այդ քիչն էլ մէկ ու երկու չէ, այլ հարիւր ու հազարներ: Սոքա հասարակութեան անարգուած և անամօթ մասն են կազմում, մարդն էլ կինն էլ յետ են դրել իրանց ինքնասիրութեան պատիւը. ոչ ոքից չեն ամաչում, Աստուծուց էլ չեն երկնչում, ամենայն ինչ սոցա համար է ստեղծուած. իսկ իրանք իրանց կրքերի համար: Կրքերնին յագենայ միայն. թող աշխարհն ինչ ուզում է խօսէ դոցա վերայ: Ճշմարիտ է, սոքա և անպէտք են ընկերականութեան և ամբողջ մարդկութեան համար. բայց մի և նոյն ժամանակ պէտք է խոստովանել, որ դոցա փչանալու պատճառը դարձեալ հասարակութեան կազմակերպութիւնն է, հասարակութեան անտարբերութեան ու վարք ու բարքի զոյն է, որ երևում է իւր ճիշդ պատկերով դոցա վերայ:

4. Ընդհանրապէս ընտանեաց մէջ այրն աւելի իրաւունք և ազատութիւն ունի քան թէ կինը: Սա քանի որ աղջիկ էր և իւր հօրական տանը, տեսնում էր որ հայրն ու մայրը մի կողմից, եղբայրներն ու ազգականներն էլ միւս կողմից աւելի սիրում են իւր եղբօրը քան թէ իրան: Նա տեսնում էր արդէն այն զանազանութիւնը, որ ծնողք դնում էին իւր և եղբօրը մէջ: Նա նկատում էր որ ծնողք ուրախանում էին հետզհետէ, տեսնելով իրանց տղայ զաւակի մեծանալը, մինչդեռ իւր մեծանալը հետզհետէ աւելացնում էր ծնողաց հոգսը: Նա լսում էր, որ երբ մի օտարական հարցնում էր իւր հօրը կամ մօրը թէ քանի որդի ունին. պատասխանում էին նոքա միայն տղաների թիւն ասելով: Հայրը չէր ասում չորս որդի ունիմ, երբ նա ունենար 2 տղայ և 2 աղջիկ, այլ միայն տղաների թիւն էր ասում. «երկու որդի ունիմ.» երկու էլ աղջիկ: Այսպէս էր պատասխանում հայրը, որովհետև աղջիկն որդի չէ համարվում ըստ սովորութեան: Այս պատասխանը լսող Ասիացին էլ չէր զարմանում. որովհետև Ասիայում միայն արուն է որդի համարվում, արուն է ժառանգ, արուն է հօր օջախի վառ պահողը: Այս պատճառով ծնողք թէ սիրելու և թէ ատելու ժամանակ կարող են մի և նոյն խօսքերը գործ ածել աղջկայ դէմ, բայց տղի դէմ ոչ: Նոքա աղջկանը սիրելիս ասում են. «գետինը մտածն ինչ սիրուն է, գրողը քեզ տանի, սատանի փայ լինիս դու. կարիւտը տանի քեզ, տես, տես փուչ կենդանին ինչպէս է ուտում է, ինչպէս է խօսում է, այ դու փչանաս, բալամ»: Բայց ատելիս էլ նոյն խօսքերովն են անիծում. միայն ձայնի շեշտը փոխելով: Իսկ տղին զուցէ անիծելիս, շատ բարկացած ժամանակ միայն այս խօսքերով անիծէր հայրը կամ մայրը. այն էլ յետոյ երբ սիրտը մի քիչ նստում է, աւելացնում է. սատանի ականջը խուլ կամ թէ Աստուած դու չլսես: Նա տեսնում էր, երբ որ ինքն էր հիւանդը տանը մէջ, ոչով այն աստիճանի չէր փայփայում, չէր ցաւակցում, չէր կարեկցում իրան, որ աստիճանի որ փայփայում էր իւր եղբօրը, և ցաւակցում և կարեկցում սորան. երբ սա էր լինում հիւանդ: Նա լսում էր որ ծնողք երդուելիս տղի կամ տղերանց անունովն էին երդվում և ոչ աղջկայ, որովհետև ազիզ զաւակը տղան է: Տեսնում էր որ մայրը կերակուր ածելիս լաւ կտորը տղին էր շնորհում. առաջ տղի համար էր մտածում իսկ հայրը ջիբումը միրգ ունենալիս ձեռքը առաջ տղի համար էր ջեբը տանում. օտար տեղից վերադառնալիս առաջին ընծան տղի համար էր բերում: Վերջապէս տեսնում էր որ ծնողք մտածում էին աւելի իրանց տղի ներկան ու ապագան լաւացնելու. հարստութիւն, տուն, տեղ բոլորը տղի համար էին աշխատում մեռնողն էլ մինչև անգամ կամենում էր տղի ձեռքի հողին արժանանալ:

Այս բոլորից վերջապէս խեղճ աղջիկը նկատում էր իւր աւելորդ տեղ բռնելը ծնողաց օջախում, տեսնում էր եղբօր գերազանցութիւնն ու իւր ստորնութիւնը ծնողաց առաջին. զգում և համոզվում էր որ ծնողաց համար աղջկերքը Աստուծոյ պատիժ, իսկ տղերքը պարգև էին համարվում: Նա համոզվում էր որ ծնողաց մօտ այն իրաւունքը, որ իւր եղբայրն է վայելում, ինքն այն չունի, համոզվում էր, որ ծնողք հաւասար չեն սիրում իրանց տղերանցն ու աղջկերանցը: Նա համոզվում էր, որ ծնողք կերակրում, հագցնում և պահում էին իրան, մի որև է տասն և երկու կամ տասն և հինգ տարուայ ժամանակի համար միայն և վերջ թէ առաջ տալու են մարդու. սորանից առնելով այն կաթի գինն էլ, որ ծծել է:

Այս զգացմունքների տակ մեծացած աղջիկը կազմում է իւր համար միանգամից ընդ միշտ այն համոզմունքը թէ ինքը բնաւ երբէք չի կարող ունենալ այն ձայնն ու իրաւունքը տան մէջ, որ կարող էր ունենալ հօր արու զաւակը: Եւ երբ մարդու է գնում, այդ համարում է իրան համար բաղդ, գիտենալով որ իւր հաստատուն բնակարանը մարդանց տունն է և ոչ հօրանցը: Նա գիտէ որ ինչպէս հօրանց տանը պահվում էր ուրիշից և ոչ թէ ինքն իրան պահում, նոյնպէս էլ մարդանց տանը կարօտ է պահուելու. պահողն ու տիրութիւն անողն էլ գլխաւորապէս իւր մարդը պիտի լինի: Նա մարդին տէր է ճանաչում ըստ ամենայնի և փորձերից սովորել է, որ տէրը միշտ աւելի ունի իրաւունք և ձայն քան թէ նորա ստորադրեալը: Այս պատճառով հնազանդվում է նա կուրօրէն իւր պահողին՝ իւր տիրոջ կամքին: Նա սովորել է լսել միայն և ոչ հրամայել. սովորել է հրաման կատարելու և ոչ հրաման տալու, Նա սեպհականել է իրան ստրկական պարտաստանան հայ մատենագիրներից և խմբագիրներից:

Նոյն հոգւով գրած է և Արարատի № թ. սեպտեմբեր ամսու տետրակում վ. Ե. Մ. մի այլ յօդուածը "կղերական կրթութենէ մի նոր հետևանք» վերնագրով: Սորան առիթ է տուել մի հայ խմբագրի նկատմունքը, թէ դաւաճանութիւն և մատնութիւն անելը կղերական կրթութեան հետևանք է: Վ. Ե. Մ. հոգմ է տարածում երկար բարակ խօսելով, թէ հայ եկեղեցականներն որպիսի ծառայութիւնք արած են կրօնական և բարոյական կրթութիւն տալով հայ ազգին և սրանով ազգը պահպանելով, մոռանալով որ հայ խմբագրի խօսքը ոչ թէ հայ եկեղեցու հոգւով կրթված և դաստիարակված եկեղեցականաց վերայ է, այլ կղերական կրթութիւն ունեցողների վերայ, որպիսիք հայ եկեղեցին չէ կարող ծնանել, որովհետև նորա մէջ չկայ կղերականութիւն:

Իսկ հայ եկեղեցականաց մէջ շատ կան, ինչպէս բազմիցս ցոյց ենք տուել, օտար եկեղեցեաց հոգւով մեծացած և կրթված եկեղեցականք, որոնք իրանց կղերական ուղղութեամբ երբէք չեն քաշվել մատնութիւնից և դաւաճանութիւնից: Թող պ. Վ. Ե. Մ. լաւ ուսումնասիրէ կղերականութիւն ունեցող եկեղեցու պատմութիւնն և յետոյ նրան պաշտպան հանդիսանայ:

Հերիք է նրան եթէ ուսումնասիրէ քաթոլիկ եկեղեցու կրօնաւորաց մի կարգի՝ Յիսուսականների կարգի պատմութիւնն և տեսնէ, թէ այդ կղերականներն որպիսի և որքան դաւաճանութիւնք ու մատնութիւնք արած են և ինչ զարհուրելի վնասներ պատճառած մարդկութեան:

Մենք գուցէ վ. Ե. Մ. յօդուածների վերայ ուշք չդարձնէինք, եթէ նոքա երևէին մի մասնաւոր լրագրի էջերում, նա մանաւանդ որ նոքա են արտայայտիչ մի գուցէ անխելահաս և մանուկ մտքի արդեան. բայց որովհետև նոքա երևեցան Արարատի մէջ, որ տպագրվում է մայր Աթոռում և արտայայտիչ է նորա միաբանութեան հայեցուածքների— ուստի և հարկ համարեցինք վերոյիշեալ մի քանի տողը գրել: Աւելացնում ենք և այն, որ շատ ցաւալի է տեսնել սուրբ Էջմիածնի բերան եղող Արարատը այնպիսի ուղղութեամբ, որ արտայայտվում վերեալ յօդուածներում: Մենք այդ յօդուածներում, որոնք ընթերցանում են բոլոր հայ եկեղեցականք և շատ աշխարհականք, տեսնում ենք լոկ չար դիտաւորութիւն ազգի ընտիր մասը— ուսեալ երիտասարդներուն — ուսուցիչներուն և խմբագիրներուն, որոնք նուիրած են իրանց ազգի և եկեղեցու ծառայութեան— կասկածելի կացուցանել ազգի աչքում, ցոյց տալով նրանց դաւաճան ազգի և եկեղեցու շահերին: Այդ և այդպիսի յօդուածներն անպատուութիւն են բերում Աթոռին և սորա միաբանութեան, հիմնված լինելով Մաքիավելականութեան «բաժանեա՛, զի տիրեսցես» կանոնի վերայ— մինչդեռ Սուրբ Աթոռի կանոնը պէտք է լինէր և լինի—Միացրո՛ւ, սիրով կապի՛ր և իշխի՛ր„— թէ քո և թէ ազգի ու եկեղեցու բարօրութեան համար*):

ԱԶԳԱՅԻՆ

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ

Ամսոյս 8-ին Նորին կայսերական Բարձրութեան Կովկասեան փոխարքայի տօնի օրն եղաւ հանդիսաւոր բացումն Անանեան Մարիամեան Հայ օրիորդական դպրոցի: Կուսանաց անապատի եկեղեցում ինքը Սրբ. առաջնորդը պատարագիչ էր: Եկեղեցու մէջտեղը դրած էր սեղանը դիպազարդով զարդարած: Պատարագից յետ սեղանի առաջին կատարվեցաւ նախ մաղթանք և ապա հոգեհանգիստ հանգուցեալ Մարիամ Անանեանց տիկնոջ համար, որոյ անունով բացվեցաւ դպրոցը: Ապա բոլոր եկեղեցական դասն և հանդիսականք գնացին նորաբաց դպրոցը, ուր կատարվեցաւ օրհնութեան հանդէսը: Այստեղ եղան ճառախօսութիւնք: Ճառեր ասացին սրբազան առաջնորդն, Տէր—Արսէն Բագրատունին և դպրոցի տեսուչը: Սրբազան առաջնորդը յայտնեց իւր ճառի մէջ, որ նորաբաց կեղեցին յանձնվում է կոյսերի խնամոց և հոգացողութեան և այս Թիֆլիզում առաջին օրինակն է. ուստի և հարկ կայ հայ երիտասարդների վերայ, որ նոքա միաւորվելով երիտասարդ և եռանդոտ կոյսերի հետ, առաջացնեն հայ ազգին նոր սերունդ, ժամանակի յարմար մայրեր: Մեծ. տեսչի ճառն էր մանրամասն և երկար խօսք կանանց կրթութեան մասին:

Սորանից յետ հանդիսականք վայելեցին սուրճ և ցրվեցան: Արդէն դպրոցը ունէր 107 սանուհիք, որոնցից 60 մեծ. պ. Անանեանցի հաշւով: Յարգ և պատիւ մեծ. Անանեանցին. երանի թէ և մե՛ր միւս հարուստներն էլ հետևէին նորա օրինակին: Բարերարութիւնն ու բարեգործութիւնք մարդուս ամենամեծ պարտքն է և զարդը:

Նկատման արժանի են այս հանդիսի միջոցին երկու մասնաւոր դէպք ևս: Այն է նախ, որ հոգեհանգստեան ժամանակ հանդիսականներին մոմեր բաժանեցին և փողերը նրանցից առան, մինչդեռ տարակոյս չունինք, որ այս մասին կարգադրութիւն եղած պիտի լինէր հոգեհանգիստ կատարել տուողի կողմից և երկրորդ, որ Անանեան դպրոցի համար բարերարներ գըրուել տուին ոմանց, որ նոյն հանդիսի միջոցին անտեղի էր ըստ մեր կարծեաց:

Այցելու

ԵՐԵՒԱՆ.

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ„ Լրագրի):

—

Կրկին հայ ժողովուրդը յառաջադիմութեան մի քայլը առաջ փոխելու վերայ է, ընդունելով իւր ծոցը նոր ձեռնադրուած քահանաներ: Աչքը լոյս այն քահանաներին, որոնց նոր ընկերներ գնալով, արդիւնքը կ՚կարճուի. իսկ ժողովուրդի աչքն էլ լոյս որ իւր քսակը առատօրէն բաց պիտի անէ: Ամսոյս 28-ին տասն և երեք հատ քահանացուներ Սարդարապատու, Սուրմալուայ և Գառնու կողմերից ժողոված Երևանեան նոր փողոցին նայող Ս. Պօղոս և Պետրոս եկեղեցւոյ գաւթի առաջնորդարանը, պիտի ուղևորվէին դէպի Սևանայ վանքը ձեռնադրվելու տեղւոյս վիճակաւոր Նշեցար արքեպիսկոպոսից: Սորանցից մի քանիսն ինձ ծանօթ լինելով թէ ինչ աստիճանի ընդունակութեան տէր մարդիկ էին՝ ինձ առիթ տուեցին աւելի հետաքրքրական աչքով նայել երբ նոցա դրութիւնը ամեն մի անց ու դարձ անողների ուշադրութիւնը պիտի գրաւէր և ամօթ ու նախատինք բերէր մեր հայ հոգևորականութեանը: Նոքա սև վերարկուներում կոլոլված, կարմիր Ֆասերը գլխներին ետնաքի դրած, մէկը մի քարի վերայ նստած, ասեղն ու կարը ձեռքին վերարկուի ասլին ծածկուած հին արխալուխի փէշը շուռ տուած կարում էր, միւս կողմում երեքն ի միասին ուրիշներից ընծայուած շլեապաների կտորները կարկատում, մի քանիսն էլ ձեռքերը ետևին դարսած, Ֆասները ունքերի վերայ պոկացրած, կէս թուրքերէն կէս հայերէն բառեր խօսակցութեանց մէջ խառնած, ծանր ճեմելով մի ծայրից միւս ծայրը կարծես իւրեանց եկեղեցիների. ծխական դպրոցների և ժողովուրդի բարեկարգութեանց համար նորանոր խորհրդակցութիւններ էին անում. էհ ինչ ասեմ: Քանի քանի անգամ այդ մասին հրապարակաւ հրատարակութիւններ եղան. բայց ոչ մինը տպաւորութիւն չարաւ:

Ասացինք ինչ աստիճանի ընդունակութեան տէր մարդիկ էին: Թոյլ եմ տալիս ինձ ասել որ երբ նոքա այդ բարձր կոչման համար ընտրուեցան, տեսնենք ունի՞ն գոնէ մի կամ երկու արժանաւորութեան կողմերը, որոնցով էլ կարողանային օրինակելի լինել ժողովրդեանը: Անգամ վարժ ընթերցանութիւնից զուրկ են, բոլոր, մերկ. ուր կմնայ գիտութիւն անուն բառը: Երանի թէ հայերէն մաքուր խօսէին, քաղաքավարի լինէին, բարոյական վարք ու բարք ունենային, որ գէթ միայն այդ եղքով կարողանային համոզել, պատկառելի կերպարանքով ազդեցութիւն անել ժողովրդին: Ի՞նչ արդիւնքներ կարող են այդպիսիք ընծայել ժողովրդին, և կամ ի՞նչ բարիքներ պիտի սերմանեն ապագայ նոր սերունդի մէջ մինչդեռ իրանք շատ ու շատ կարօտ են դաստիարակների:

Այսպիսի դէպքերում ինչո՞ւ իշխանութիւնը չի պահում ճշդութիւն, քանի որ իւր արձակած հրամանին համաձայն գիւղերից ընտրուած քահանացուները — գոնէ պիտի սովորած լինին կրօնագիտութիւն, հայոց լեզու — մասամբ քերականութիւն: Վերջին առարկաներից բոլորովին զուրկ, չգիտեն և կատարեալ նօտառ. բաւական է որ փօ, է, վէ, բէ, խօ, նէ, պա, ձայնանիշները մռմռան, յետ այնորիկ "Ածէք զգա յօթներորդ աստիճանին:

* * *

ՔԻՇԻՆԵՎ

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ„ Լրագրի)

—

Տեղւոյս հայ օրիորդաց միակ դպրոցը հոգեվար դրութեան մէջ է: Փոխանորդ Մխիթարեանց Սահման վարդապետի, վեհափառ Հայրապետի հրամանաւ, տեղւոյս Էջմիածնական կալուածներից տրուած 300

---

*) Ծանօթ. Սոյն հայեցուածքով կաթողիկոսութեան վերայ երևեցաւ և Փորձի վերջին համարում մի նամակ Ս. Պետերբուրգից. Ե. Ս. ստորագրութեամբ: Այս յօդուածի առթիւ մի այլ անգամ կխօսենք:

ւորութիւններն ու բնութիւնը. ուստի մարդանց տանն էլ նա միայն այն ժամանակ է գովութեան և շնորհակալութեան արժանանում, երբ աւելի լսում է, քան թէ խօսում, աւելի հնազանդութիւն է ցոյց տալիս, քան թէ պահանջում. աւելի ստորադրվում է, քան թէ տիրում. աւելի համաձայնում է քան թէ դատում: Մարդը կամ տան մեծերը պէտք է խորհեն, դատեն, կշռեն, վճռեն. իսկ հարսը պէտք է այդ վճռին հնազանդի ու գլուխ տայ:

Նա պսակուելիս բերանը կապել չխօսկանացել է. իրաւունք չունի մարդանց տանը մեծերի հետ հաւասար նստելու, հաւասար խօսելու, հաւասար ուտելու, հաւասար քնելու: Ամենից ուշ քնողն ու շուտ զարթնողը հարսը պիտի լինի. ամենից քիչ խօսողը. քիչ ուտողը, քիչ ման եկողը, քիչ մարդոց հետ ծանօթացողը հարսն է: Նա մինչև մի քանի երեխայից տէր դառնալը պէտք է աչքերը ծածկած մնայ: Սկեսրի, սկեսայրի, տեգրերի, տեգրակինների և մեծ տալերի ու առ հասարակ իրանից մեծերի հետ չպէտք է խօսի, այլ շարժումներով պիտի հասկացնէ իւր զգացումներն ու մտքերը: Նոցա հետ սեղան նստելու չի համարձակվի. պէտք է մեծերն ուտեն, նա կանգնի ոտաց վերայ, ձեռքերը դոշին դրած ծառայէ: Երբ նոքա կերծըննեն ապա նա կը քաշուի տան մի քունջը, երեսը դէպի պատը դարձրած, իրանից փոքրերի հետ կուտի, ինչ որ տան մեծ կինը կը տայ: Նա պէտք է սկեսրայրի ու մեծ տեգրերի ոտնամանները հանէ, ոտքերնին ճմլէ, և երբեմն էլ լուանայ, ցամաքեցնէ ու համբուրէ. քնելիս տեղերնին շինէ, շորերնին հանէ, դնէ գլխներու տակը. ծածկէ, ջուր դնէ մօտերնին. ապա գնայ իւր տեղը մտնի: Առաւօտն էլ այնպէս պիտի վեր կենայ, որ իրանից մեծերը չտեսնեն նրան մարդի մօտ պառկած: Ընդհանրապէս հարսին ոչ միայն իւր մարդն ունի իրաւունք հայհոյելու, նախատելու և ծեծելու, այլ և սկեսուրը, սկեսայրը, տեգրերն ու տեգրակիններն էլ:

Ինչ ուզում են տան մեծերը կարող են առնել, տալ, տանել, բերել, գնել, վաճառել. հարսըն ամեննին իրաւունք չունի այդ մասին ձայն ծպտուն հանել, լաւ կամ վատ ասել, մեծերի գործին խառնուել. միայն անամօթ, հարամ ծըծկերը կարող է այդպիսի համարձակութիւն ունենալ և ոչ հալալ կաթնակերը: Տան մէջ, ուր իրանից մեծ կայ, նա ոչ մի բանի վերայ իրաւունք չունի. իսկ ուր որ ինքն է տան մեծը, տան տիկինը, այնտեղ էլ իւր իրաւունքը տան պատերից դէնն անցնել չի կարող. մարդն է այդպիսի դէպքերում էլ առաջին և բացարձակ իշխողը. կնոջ ինչ գործն է թէ մարդը ծախում է իւր ունեցածը, թէ գրաւ դնում, բաշխում թէ վատնում. նա այդ հանգամանքներում ամենևին ձայն չունի: Մարդը կարող է պարտք անել. պարտքի տեղ երեխայքը գրաւ դնել. կնոջ սեպհական զարդերը վաճառել ու վատնել, ծուլութիւն անել, արբեցութիւն, անառակութիւն ու մոլութիւն անել. բայց կինը կարող չէ որ նորան այդ մասին ասել աչքիդ վերն յօնք կայ. չէ կարող սաստել կամ խրատել: Մարդը կարող է ուրիշի կնոջ հետ սէր կապել, աշխատանքը նորան կերցնել, թուղթ կամ զումար խաղալ և ունեցածը տանուլ տալ մինչև լուսաբացը ման գալ, սիրած ուզած տեղերում կամ ամբողջ օրերով, շաբաթներով, ամիսներով ու տարիներով այլ և այլ տեղեր թափառել. իւր կրքերին բաւականութիւն տալ, կնոջն ու երեխայքը թողել անհաց ու անհոգ. կրկին վերադառնալ գալ կնոջ մօտ, և այդ ամենի մասին ամենևին բանի տեղ չդնել կնոջ լացն ու կոծը, գանգատն ու աղերսանքը:

Այն կինը որ այդ տեսակ վարմունքի համար կռուղքէ մարդու դէմ, կգանգատէ և արդարութիւն ու բաւականութիւն կպահանջէ, այնպիսի կինը կը համարուի անպարկեշտ, անամօթ, լիրբ, և կը կորցնէ հասարակութեան աչքում իւր կշիռը: Ամենքն էլ նորան կասեն. դու կնիկ ես, դու իրաւունք և ազատութիւն ունիս քո կամացի և սեպհական պատիւը միայն պահելու. քեզ ինչ թէ քո մարդը սիրում է ուրիշին. քեզ խօ տանից դուրս չի անում, դու նորա գործերում ինչու ես մատդ խառնում, չէ՞ որ գլխիդ լաչակ ունիս. ուզում ես տաղ լըրբերի հետ մեկնես, նայլն նայլն:

Հազարաւոր կանայք կան որ ուրիշների հացը թխելով, լուացքն, ձեռն ու կարն անելով, երեխաներին ծիծ տալով կամ որև է ծառայութիւն անելով, օրական քանի մի կոպէկ վարձ են ստանում, և դորանով ոչ միայն իրանց երեխանքը պահում, այլ և մարդկերանցն էլ շորեր անում, փնտում և արաղի ու ծխախոտի ծախսերը տալիս. իրանց գլուխն էլ պահում: Բայց արի տես, որ սոցա մարդիկն էլ տեղն ընկած տեղն չեն ամաչում ասել. տօ կնիկ չես: Մազդ երկար է, խելքդ կարճ. որ թողեն քեզ քու կամքին, աշխարհս տակն ու վրայ կանես, քեզ համար բերողը ծեծն ու ջարդն է: Վա՜յը տարել է այն կնկանը, որ փոքր ինչ համարձակ խօսի մի ուրիշ մարդի հետ, կամ ժպտայ և ծիծաղի նորա մօտ. և այդ էլ իրան մարդը նկատէ: Աէհ կրնկայ էհտըրքարին նահլաթ. կնկան հաւատալ չի կարելի. տօ աշխարքս կնկանիցն է մեղքի մէջ ընկել է, կնկայ ձեռքից էլ քանդուելու է: Ցօ. անզգամ. որ խալխի հետ կանգնես ու ու բերանդ բաց անես, ասես ու ծիծաղես չի լինի: Աստուծ գիտենայ, կնկայ գլխիցը ծեծն ու զըմբուզը խակի պակաս չի պիտի անես հա, թէ չէ կը գայ գլխիդ կը նստի եայլն, նայլն:

Այս է մեր խեղճ իգական սեռի վիճակը տըգէտ և բռնաւէր հասարակութեան մէջ. և կնոջ վերայ այս տեսակ գաղափար ունենալն է պատճառը, որ մեր ստորին կարգի իգական սեռը չունի ոչ մի կարգադրմունք, ոչ մի մխիթարական յատկութիւն: Նա բոլորովին ինքնուրոյնութիւն չունի, ծնողքն ու մարդը, ազգականներն ու հասարակութիւնը, այո և մասամբ եկեղեցական օրէնքները չեն կամենում կնկան տալ մարդին հաւասար իրաւունք գործնական և ամուսնական կեանքի մէջ. ամենքն էլ ուրանում են, որ նա ևս Աստուծոյ ստեղծած ազատ էակ պիտի համարուի. բոլորն էլ մարդին տէր են համարում, իսկ կնոջը նրան հնազանդ ամե են ընդունում և ոչ թէ զուգահաւասար իրաւանց տէր և ընկեր մարդին: Իգական սեռը գուցէ չի էլ զգում իւր անհաւասարութիւնը, իւր իրաւունքների յափշտակութիւնը, իւր ստրկական վիճակը, իւր աննախանձելի կենցաղավարութիւնն ու դրութիւնը. գուցէ ասում ենք չի էլ հասկանում. վասն զի այդ ամենը ճանաչելու չափ ազատ միտք ու զարգացած ճաշակ չունի. այնու ամենայնիւ հասկացող հասարակութեան համար այդ մի նախատինք է, որի ջնջելու համար նոյն իսկ ինքն է կոչուած:

5. Ուր որ բռնութիւն կայ, այնտեղ անկարելի է որ լինի անկեղծ մտերմութիւն ճշմարիտ սէր: Ծնողք իրանց որդւոց վերայ բռնութիւն գործ դնելով, որդիք հետզհետէ կորցնում են իրանց որդիական յարաբերութիւնը: պարզ ու բացայայտ երբէք չեն յայտնում իրանց ձըգտումները. մտածում են այլ բան և խօսում այլ բան. վերջնական գործից յետոյ նկատում են ծնողք որ իրանց որդւոց ասածն ու արածը միմեանց չեն համաձայնում: Ցօ բալամ, դու այդպէս չէիր ասում. հիմա ինչու ես այսպէս գործել: հարցնում են նոքա իրանց որդուն այն ժամանակ, երբ իրողութիւնը կատարուած ու անցած է:

—Ես այդպէս չէի ասում, ճշմարիտ է—պատասխանում է որդին. յուսահատ յանցաւորի պէս. բայց այդպէս էի մտածում, ինչպէս որ գործել եմ, դուք չէիք թողում ինձ ճշմարիտն ասել, ես վախից ասում էի այն, ինչ որ ձեզ դիւր էր գալիս. բայց արել եմ այն, ինչ որ ինձ է դիւր եկել. բռնակալ ուսուցիչը չէ կարող երբէք մտերիմ աշակերտ ունենալ, չի էլ կարող նա կրթող ազդեցութիւն ունենալ, որովհետև կրթելուց առաջ հարկաւոր է ճանաչել կրթուողի պակաս կամ թերի կողմերը, որպէս զի շտկել կարելի լինի. բայց սորա համար մտերմութիւն է պէտք. սա էլ սիրոյ և ազատութեան պտուղ է, որ բռնութեան հետ ապրել չի կարող: Բռնակալ մեծաւորաց սպասաւորները, բռնակալ պետութեանց հպատակները, բռնակալ մարդոց կանայք լինում են սովորաբար խորամանկ, կեղծաւոր, ստախօս, խարդախ և հոգւով ու սրտով օտար իրանց տէրերին: Մի տեղում նենգութեան շահը, մէկել տեղում անդիմադրելի ոյժը, և մի ուրիշ տեղում էլ աւանդական սովորութիւնը, հասարակաց կարծիքը կամ մի այլ կարիք ստիպում է բռնադատուած ստորադրեալներին խոնարհութիւն ցոյց տալ և լսել ու կատարել իրանց բռնադատողների հրամանները, բայց այդ խոնարհութեան, այդ լսողութեան ու կամակատարութեան մէջ ներքին բաւականութեան, համակրութեան և սիրոյ ոչ մի նշոյլ չէ փայլում: Այդպիսի բռնադատուած ստորադրեալները, լինէին դոքա զաւակներ, ամուսիններ, աշակերտներ, սպասաւորներ թէ հպատակներ, ուր յոյս ունենային փոքր ինչ ազատ շունչ շնչելու իսկոյն կդաւաճանէին իրանց բռնաւէր խնամակալին. այս ցոյց է տալիս մեզ գործնական կեանքը:

Ո՞վ է տեսել մի բռնակալ հօր որդի, որ շնորհակալ եղած լինի իւր հօրից. կամ բռնակալ մարդի կին, որ սիրած լինի իւր մարդին. կամ բռնակալ ուսուցչի աշակերտ, որ յարգած լինի իւր ուսուցչին, և կամ բռնակալ տիրապետից հպատակներ, որք մահակից լինին եղած իրանց տիրապետողին: Եթէ ստրկութիւնը, գերութիւնը, հարստահարութիւնը, տանջանքն ու չարչարանքը կարող են հաճելի լինել մարդկային բնութեան ապա և տիրողը, ստրկացնողը, հարստահարողը, տանջողն ու չարչարողն էլ կարող էր սիրելի լինել մարդուս: Աստուածների մէջ էլ միայն այն Աստուածն է սիրելի, որ սիրոյ և բարութեան գաղափարն ու օրինակն է ամփոփում իւր մէջ և ոչ երկիւղինը և ատելութեանը: Ով չգիտէ, որ դժոխքի տանջանքներից վախենալու պատճառով գողութիւն չանելը՝ մարդասպանութիւն և առ հասարակ մեղք չանելը՝ դեռ ևս առաքինութիւն չէ: Որքան ցանկալի էր դժոխքի գոյութեան չհաւատալ, բայց և այնպէս սիրել ընկերին և բարի անել ամենքին: Որքան փառք ու պարծանք է մէկին, որից չեն վախենում, բայց հնազանդում են նորա կամքին. ակնկալութիւն չունին նրանից, բայց բարեբանում և փառաբանում են: Երջանիկ չէ՞ այն հայրը կամ մայրը, երբ որդիքըն առանց խաբեբայական ձևերի և խօսքերի այլ անկեղծ և ճշմարտապէս ասում են իրանց ներքին խորհուրդները և զգացմունքները նոցա: Եթէ այդ հայրն ու մայրը բռնադատ անձեր լինէին, որքան մեծ օգուտ պիտի տային թէ իրանց և թէ որդւոյը, դոցա ներքին զգացմունքներն ու խորհուրդները լսելով: Որքան մեծ օգուտ են քաղում այն մանկավարժները, որք կարողացել են ծանօթանալ իրանց աշակերտների ձգտումներին և տրամադրութիւններին: Ո՞րքան դիւրին է բժշկին բժշկել մի հիւանդ, երբ դա բացայայտ խոստովանել է իւր հիւանդութեան առիթը. կամ ինքը բժիշկն է ճանաչել ցաւը: Ո՞րքան հաստատ և հիմնաւոր են այն բարեկամաց յարաբերութիւնները, որք անկեղծ են միմեանց հետ և սիրում են ճըշմարիտն ասել իրարու:

(Կ՚շարունակուի)

ռ. տարեկան օժանդակութիւնը կարճելուց ետքը յունիսի 1-ից դպրոցը կառավարվում է Մանուկ—բէգ Իշխանի և Ջալաբեանց Տիկնոջ տուած տարեկան 100-ական ռ. օժանդակութեամբ և այդ իսկ պատճառաւ վարժապետներից մինը արձակուած է: Մինչև նոր տարի բաւական կլինին այդ գումարները, որպէս և իցէ պահպանելու դպրոցը, իսկ այնուհետև հարկ պիտի լինի փակել բոլորովին և զրկել հայ աղքատ աղջիկնքը մայրենի լեզուի ուսմունքից. ժողովուրդը յուսահատած և տարիների անյաջողութիւններից նեղուած, Թողել են դպրոցը առանց որպիսի և իցէ մատակարարութեան. իսկ փոխանորդը յայտնի անտարբերութեամբ վարվում է դպրոցի հետ, մոռանալով խապա թէ իւրեան սրբազան պարտականութիւնն է, իբրև հովիւ ժողովրդոց, իբրև փոխանորդ վեհակի, ամենայն հնարք ի գործ դնել բարեկարգելու դպրոցը, միջոց և հնար գտնել, խօսել, և քարոզել ժողովրդեան և ոչ թէ ունեցած չնչին միջոցներից էլ զրկել. մինչդեռ ընդհակառակն արդէն 8 ամսից աւելի է քանի Քիշնեվում է մնում, բայց դեռ և ոչ մի ժողովրդի երես չի տեսել, ոչ մեկի հետ չի խօսեցել և ոչ մի աշխոյժ ի գործ չէ դրել այն նպատակաւ: Ասում են, թէ դպրոցից 300 ռ. կտրելով ուզեցել է իրա հաւատարմութիւնը ցուցանել Ս. Աթոռոյն. այդ բաւական չէ, դեռ Մանուկ բէգին և Ջալաբեանց Տիկնոջ խաբար է ուղարկել իր հաւատարիմ ծերունի քահանայի միջոցաւ, որպէս զի այլ ևս չտան նրանք իւրեանց օժանդակութիւնը, այն պատճառաւ որ իբրև դպրոց չկայ, մինչդեռ ինքը ամեն անգամ, որ գալիս է եկեղեցւոյ բակը, ուր գտնվում է նաև վեհակի հոգևոր կառավարութիւնը, տեսնում է 16 հոգուց աւելի հայ աղքատ աղջըկունք նստած դպրոցում ուսանում են իւրեանց մայրենի լեզուն: Չենք հասկանում թէ ինչ օգուտ պիտի ունենայ արժ. փոխանորդը, գուցէ յոյս ունի այդ փողերը սուրբ Էջմիածին ուղարկել և աւելի հաւատարիմ երևիլ. բայց այդ ի զուր է. վասն զի Մանուկ բէգը արդէն տալիս է Էջմիածնին իւրաքանչիւր տարի 300 ռ: իսկ Ջալաբեանց Տիկինը, որը մայր էր և խոստացած ևս իր հանգուցեալ ամուսնից Թողած 400 դեսեատին հողը ընծայել տեղւոյս դպրոցին, միմիայն այն պատճառաւ չի կատարում իր խոստումը և, ինչպէս երևում է, կատարելու էլ չէ, վախենալով որ մի գուցէ այդ 400 դես. հողը, որ՝ արժէ 20 հազար ռ., մի կերպով յափշտակվի դպրոցից և դարձեալ դպրոցը աղքատ մնայ և իւրեան նպատակը չկատարուի, չնայելով որ եղած են շատ բարեմիտ անձինք, որ կամեցած են հասկացնել բարեպաշտ Տիկնոջ թէ, Էջմիածինը Թշնամի չէ իր զաւակներին, թէ այդպիսի բան չի կարող լինել. այսու ամենայնիւ անօգուտ եղել է նրանց բոլոր ջանքը, երբ նա յայտնի տեսնում է որ Էջմիածնայ ներկայացուցիչ փոխանորդը այդպէս վարվում է դպրոցի հետ և այդ չնչին 300 ռուբլիից էլ զրկում է: Միթէ լսելով և գիտնալով թէ կայ Քիշնեվում մի այդպիսի բարեպաշտ Տիկին, որ ունի ձեռքին 400 դ. հող միմիայն ազգին ընծայելու, անփոփոխ մինչև ցայսօր նպատակաւ, եթէ ոչ Քիշնեվի Հայոց գէթ ուրիշ տեղերի, գոնէ մի անգամ պարտական չէր փոխանորդ վարդապետը գնալ այդ Տիկնոջ մօտ յորդորել, ասել, քարոզել և աշխատել, որ օր յառաջ իրագործուի որպիսի և իցէ կերպիւ նորա բարի նպատակը: Երբ մտածում ես այս բաների վերայ, ակամայ և ցաւօք սրտի նորոգվում են մտքումդ երանելի Քերթողահօր մարգարէական խօսքերը: Թէ մինչև ո՞ր աստիճան վնասակար է և դեռ պիտի լինի ևս փոխանորդի այդ ընթացքը դպրոցի հետ, հարկ եմ համարում պարզել: Առաջին և գլխաւոր վնասը պիտի լինի դպրոցի փակվիլը. երկրորդ՝ Մանուկ բէգի և Ջալաբեանց Տիկնոջ տուած 100-ական ռուբլի օժանդակութիւնքը պէտք է բոլորովին կարճուին և եթէ երբ և իցէ, որպիսի և իցէ կերպիւ և կամ մի ուրիշ սրտացաւ առաջնորդի կամ փոխանորդի ջանիւք կամք լինի կրկին բանալ դպրոց, նորից հարկ պիտի լինի այդ բէն կարգալ, նորանոր խնդիրներ, ջանք և աշխատութիւն ի գործ դնել մի այդպիսի օժանդակութիւն ստանալու նրանցից. բայց տեսնենք կենդանի կմնան մինչև այն ժամանակ այդպիսի հազուագիւտ բարեպաշտ անձինք, որոց տուած օժանդակութիւնը այնպէս ապահովեալ է, ինչպէս թէ կայսերական բանկում լինէին այդ փողերը: Եւ երրորդ մեծ ջանիւք և անդուլ աշխատանօք պ. Բարխուդարեանց երիտասարդի շինուած և հաստատուած Թիլքիլեանց կապակետի կտակը, որը իւր կալուածքը, որք արժէին մինչև 10 հազար ռուբլի, նուիրեց տեղւոյս դպրոցին, մասն հանելով անտի նաև Էջմիածնայ ճեմարանին իւրաքանչիւր տարի 300 ռ. և որք պէտք է անցնէն հոգևոր իշխանութեան ձեռքը հանգուցեալ կտակարարի կնոջ մահուանից ետքը, պիտի մնայ անիրագործելի, հակառակ կտակողի կամքին և ո՞վ գիտէ գուցէ ազգականքը մի կերպ կարողանան քանդել կտակի այդ մասը Քիշնեվի դպրոցի վերաբերութեամբ, ասելով, թէ չկայ այդպիսի դպրոց: Մտածե՜ց, չափե՜ց և կշռե՜ց արդեօք Ստեփան Հայր սուրբը խոհեմութեամբ այս ամենայն հանգամանքը: Վնասն ոչ նրան, ում գուցէ ցանկանում էին հասցնել, գիտաւ, այլ միայն խեղճ և աղքատ հայ օրիորդաց — Հայոց ապագայ մայրերուն: Հրաւիրում ենք Բարձրագոյն հոգևոր իշխանութեան մատադրութիւնը այսպիսի վնասակար ընթացքի վերայ և փափաքում ենք յուսալ, որ վեհափառ և ազգասէր Հայրապետը լսելով այս ամենայն, ճշմարտապէս իբրև Հայր ըստ իւր բնատուր սովորութեան, ցաւակից կլինի իւր աղքատ և կարօտ զաւակացը և արժանապէս կ'մխիթարէ նրանց իւր բարեխնամ կարգադրութեամբ: Իսկ իրան Ստեփան վարդապետին խորհուրդ ենք տալիս իզուր չուրախանալ և չկարծել թէ հարուածելը մի խեղճ դպրոցի, շահուելով ժողովուրդի անտարբերութիւնից, կամ անկեալ անզօր մէկին — քաջագործութիւն է կամ թէ հաւատարմութիւն:

—Անցեալ շաբաթներ պատահեցայ մի հարսանիքում. մէկ էլ տեսնեմ մեր երկու երիցուհիք ձեռքերնին առած մի մի սկուտղ (պատնոս) և մէջը դրած տեսակ տեսակ անուշեղէնք (կանֆէտ) ման են ածում ներկայ եղողներին և ամենքին վաճառում են փողով անուշեղէն և ով ինչքան կամենում տալիս է. և երբ ինձ ևս մօտեցան, ես չկարողացայ իմ հետաքրքրութիւնս զսպել և հարցրի պառաւ երիցուհւոյն թէ, ի՞նչ է նշանակում այդ անուշեղինաց վաճառումը և ո՞ր օգտին է գնում գոյացած գումարը, որպէս զի ըստ այնմ գիտնամ թէ ի՞նչ գին գնեմ առած անուշեղէնիս. նա ինձ պատասխանեց թէ. «այս էլ երիցուհիների արդիւնքն է և մասը» պէտք է իմանալ, որ անուշեղէնը նրանք հեռքը չեն բերում, այլ հարսանիքի տէրերից առնում են ձրի և վաճառում են. մնացեալը տանում են հետները տուն և բաժանում են ինչպէս անվաճառ մնացած անուշեղէնը նոյնպէս և մնացած գումարը, ինչպէս և քահանայք բաժանում են իւրեանց առած պսակադրամը: Որքան աշխատեցի գտնել թէ ի՞նչ նշանակութիւն պէտք է որ ունենայ անուշեղինաց վաճառումը և ո՞րտեղից հիմնուած, այսու ամենայնիւ չկարողացայ իմանալ. թէև լսեցի, որ այդ սովորութիւնը կայ ոչ միայն Քիշնեվի այլ և Աքքերմանի, Օդեսայի և այլ շրջակայ քաղաքաց հայ երիցուհեաց մէջ:

—Այս ամառ Հնչէշտ գիւղաքաղաքի մօտ մի գիւղի մէջ Ռուսաց քահանայն մկրտում է մի հայ աղջիկ և յետոյ պսակում մի ռուսի հետ. յայտնում են այդ մասին Հնչէշտի ծխատէր Հայոց քահանային, նա էլ իսկոյն յայտարարութեամբ տեղեկացնում է տեղւոյս Հայոց հոգևոր կառավարութեան, որը գանգատվում է Ռուսաց եպիսկոպոսին: Եպիսկոպոսը անմիջապէս կարգում է քննութիւն և պահանջում է հոգ. կառավարութիւնից պատգամաւոր և տեղեկութիւնք այդ մկրտութեան վերաբերութեամբ ապացուցանելու համար մկրտող քահանայի յանցանքը և ըստ այնմ նրան պատիժ կայացնելու. բայց հոգ. կառավարութիւնը, որոյ նախագահ է փոխանորդը վեհակի, տեսնելով որ գործը պիտի երկարի և բաւական ընդարձակ գրագրութիւնք պէտք է լինին, բանը ձգում է Հնչէշտի քահանայի վզին, քահանան էլ կառավարութեան և այդպէս ոչ մի հետևողութիւն չեն անում և գործը մնում է կախ այդպէս մինչև ցայսօր:

Վերջացնում եմ նամակս յայտնելով նաև մի նորահնար Աստուածաբանական վսեմ գիտութիւն: Տեղւոյս մի ծերունի քահանայ գնալիս է լինում, կարծեմ անցեալ տարի ձմեռ ժամանակ, մի հեռու տեղ պսակատարութիւն անելու. ճանապարհին ստիպվում է մնալ երկաթուղւոյ կայարաններից մինի մէջ ամբողջ մի գիշեր, ունենալով հետը և մի տիրացու: Կայարանում եղել է մի հրէայ տելեգրաֆիստ, որը իւր պաշտօնը վերջացնելուց ետքը, տեսնելով մեր քահանային մօտենում է նրան և բաց է անում նրա հետ խօսակցութիւն մինչև ուշ գիշեր. ի մէջ այլոց, երևի հրէի հետաքրքրութիւնը շարժել է և տեսնելով որ իրա առաջ նստած է Հայոց եկեղեցւոյ քահանայ կամ լաւ ևս ասել ներկայացուցիչը, հարցնում է նրանից. «խնդրեմ ասել ինձ, Հայր, ի՞նչ է Հայոց հաւատը, կամ ինչ՞ում է կայանում ձեր հաւատը և ի՞նչ զանազանութիւն ունի Ռուս հաւատից: Մեր քահանայն, որ Թերուս մին է, «մինչև այն աստիճան որ երբ երեխայք մկրտելու ժամանակ կնքահարք կամենում են երեխայոց անուանքը կնքել Արմենակ, Արտաշէս, Բաբգէն, Տիրիթ կամ մի այլ պատմական անուամբ, նեղանում է կնքահարց վերայ և ասում. մ՞թէ օրինաւոր հայի անուն չէք կարողանում գտնել, որ այդ ջհուդի անունները դնում էք երեխայոց», դժուարանում է իհարկէ պատասխանել հրէի դժուար հարցմանը, բայց չիմանալով թէ իր խօսակիցը հրէայ է, ուզում է իրա խելքով մի լակոնական պատասխանով յագեցնել հարցասէրի հետաքրքրութիւնը և վերջապէս ասում է. «Հայոց հաւատը հիմնեալ է այս երեք բառերի վերայ. Էլի Էլի լամա սաբաքթանի. և դարձնում է երեսը միւս կողմ: Տիրացուն երբ լսում է այդ պատասխանը, որը ծնել է Տէրտէրի բերանից յետ բազում երկանց, չի կարողանում բռնել իր ծիծաղը և հեռանում է. իսկ հրէան, երբ զարմացած սկսում է թարգմանել այդ երեք բառերի նշանակութիւնքը, քահանայն էլ վեր է կենում տեղից և այլ չի ուզում երևիլ հրէի աչքին:

Հայաստանցի

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ֆրանսիայում պատգամաւորաց ընտրութիւնները, ինչպէս յայտնի է, վերջացան և մեծամասնութիւն կազմում են ժողովում հասարակապետականները. ուստի և ապահոված է այնտեղ կառավարութեան հանրապետական ձևը: Մակ—Մահոնի նախարարութեան և կառավարութեան բոլոր ջանքերը խորտակվեցան Ֆրանսիական ազգի մեծամասնութեան ցանկութեան առաջ: Միապետականութիւնը բոլորովին կորցրեց իւր յոյսը այլ ևս հաստատութիւն գտնելու Ֆրանսիայում. ուստի և այժմ կմնայ միապետական զանազան կուսակցութեանց անդամներին այսուհետև կամ զուր ճիգ և աշխատանք թափելու և կամ միանալու հասարակապետականների որև է կուսակցութեան հետ ժողովի մէջ զարթած և քննված հարցերում:

Ինչպէս հեռագիրները հաղորդում են, նոր պատգամաւորաց ժողովը բազմութեամբ ձայների որոշել է քննութիւն անել ընտրութեանց ժամանակ 'ի գործ դրված անկարգութեանց և բռնութեանց մասին ազատ ընտրութեան դէմ: Պարզ է, որ այս քննութիւնները պէտք է բանան անխնանութիւնքն այն կարգադրութեանց և գործողութեանց, որոնք ընտրութեանց ժամանակ Մակ—Մահոնի կառավարութիւնը ձեռք առաւ ազատ ընտրութեանց առաջն առնելու և իւր ցանկացած միապետական ընտրելիներուն ընտրել տալու համար:

Այս քննութիւններն անշուշտ պէտք է դատապարտեն Մակ—Մահոնին և նորա նախարարութիւնն իրանց ապօրինի գործողութեանց համար: Արդեօք ինչ ելք կունենայ այս— Մակ—Մահոնը կ'մնայ, թէ կ'հրաժարվի: Թէև նա ամենայն հաստատութեամբ յայտնում է իւր որոշումն մնալու իւր պաշտօնի մէջ և յամառելու, միայն դժուար թէ հնարաւոր լինի երկար դիմանալ ժողովի մեծամասնութեան դիմադրութեան: Այս դժուարութիւնը զգալով, ինչպէս վերջին հեռագիրը յայտնում է, Բրօլեի նախարարութիւնը տալիս է իւր հրաժարականը հակառակ Մակ—Մահոնի կամաց: Վերջինը չէ ընդունում այս հրաժարականն, որ նշան է նորա ցանկութեան դիմադրելու ազգի ներկայացուցիչների կամքին: Բրօլեի նախարարութեան հրաժարումն և նոր նախարարութեան կազմվիլը հասարակապետականներից կարող են միայն ապահովել ժողովի ապագայ խաղաղ գործունէութիւնը յօգուտ երկրի: Եթէ Մակ—Մահոնը յիրաւի ցանկանում է, որ խաղաղութիւն տիրէ Ֆրանսիայի մէջ և սա հանգամանքներով հարուստ ներկայ քաղաքական գործերում գեր խաղայ ու իւր նշանակութիւնը պահպանէ արտաքուստ, պէտք է բոլորովին փոխէ իւր ընթացքը, կազմէ նոր նախարարութիւն, որ համաձայն ժողովի մեծամասնութեան ցանկութեան գործէ: Եթէ նա յամառի և չիջնի այս ընթացքից, կ'նշանակէ նա պատկանում է մի նեղ հայեացք ունեցող կուսակցութեան և Թշնամի է իւր հայրենեաց շահերին: Այս ցոյց կտայ մօտակայ ապագայն: Ֆրանսիայի ներքին խաղաղութեան ապահովութիւնից կախված է և նորա զօրեղ կամ թոյլ գործակցութիւնը քաղաքական արտաքին գործերի մէջ — այս մեծ նշանակութիւն կունենայ ներկայումս քաղաքական աշխարհը վրդովող հարցերի որոշման համար: Ուրեմն կմնայ սպասել Մակ—Մահոնի բանելիք ընթացքին. թէ արդեօք նա պէտք է հաւատարիմ մնայ իւր նեղ կուսակցութեան հայեացքներին— թէ սրանց պէտք է զոհէ հայրենեաց շահերին: Առաջին դէպքում Ֆրանսիան պէտք է քաղաքականապէս իւր երկրորդական նշանակութիւնը պահպանէ և Մակ—Մահոնի կառավարութիւնը լինի պատմութեան առաջ ամօթալի իսկ երկրորդ դէպքում Ֆրանսիան կրկին պէտք է իրան փայլելու դիրքը բռնէ գործող առաջնակարգ տէրութեանց շարքում և Մակ—Մահոնը վայելէ հայրենեաց և ազգի շնորհակալութիւնը: Տեսնենք որը կ'ընտրէ նա:

Վերան — Քալէ 6-ին **Պաշտօնապէս.** Ղարս այսօր յարձակմամբ առնվեցաւ: Պատերազմը սկսաւ երեկոյեան 8 ժամին և վերջացաւ առաւօտեան 8 ժամին: Ռուսաց կորուստը դեռ ևս անյայտ է:

Վերան—Քալէ 7-ին Նոյեմբերի. Ղարսը Ռուսաց ձեռքումն է: Պատերազմը սկսաւ երեկոյեան 9 ժամին և վերջացաւ առաւօտեան 9 ժամին: Ամսոյս 6-ին Ռուս զօրքերը ցոյց տուին անօրինակելի քաջութիւն: Տաճիկները յուսահատութեամբ պաշտպանվում էին: Պահապան զօրաց մի մասը կամենում էր ճեղքելով անցնիլ Օլտի, միայն նորա ճանապարհը կտրեց ռուս հեծելազօրքը: Գերած են 7000 զինուոր, երկու փաշայ և շատ սպայ, զինուորական վարչութեան և հեծելազօրքի գլխաւորները, դրօշակներ, 300 թընդանօթ, պատերազմական և ուտելեղէն պաշար, զէնքեր: Ռուսաց կորուստը դեռ ևս անյայտ է. սպանած են գեներալ—մայոր Գրաբբէ, Ռէլինսկին, Ռուչկիեվ, Գէրիչ: Ռուսաց գլխաւոր բանակի մի մասը գնում է Էրզրում, թողնելով Ղարսում պահապան զօրք:

Վիեննա 17-ին (5-ին) Նոյեմբերի. Tagblatt լրագրին հեռագրում են Պարոդիմից, որ ամսոյս 6-ին գիշերը տեղի ունեցած կռվում գեներալ Սկոբելեվն, իւր չափազանց քաջութեան պատճառով, թեթև վէրք է ստացել. միայն շարունակում է կառավարելու զօրքը, պահպանելով դիրքերը կանաչ լեռան վերայ: Նորա օգնականներից մի քանիսը վիրաւորվել են և սպանվել: Սկոբելեվի տակ հինգ ձի է սպանած:

Վիեննա 17-ին (5-ին) Նոյեմբերի. Նյստեղի լրագիրներում դեռ ևս ընթանում են լուրեր աւստրիական զօրքերի տեղափոխութեանց մասին. մինչև անգամ լուր կար, թէ Գալիցիայի բանակի սպաները, որոնք արձակուրդ ստացել էին, յետ են կանչվել հեռագրով:

Պաշտօնական շրջաններում այս լուրերը ջրում են բոլորովին, ասելով, որ զօրքերի շարժման կարիք չկայ, ինչպէս չկայ և միջոց դորա համար. պատգամաւորաց ժողովի հաւաքվելից առաջ սրան գտնելու տեղ էլ չկայ: Դեկտեմբերի 5 ին միայն, երբ կ'կազմուի պատգամաւորաց ժողովը. ինչպէս պաշտօնական շրջաններում խօսում են, կարող է իրերի վիճակն այնքան պարզվել, որ կարելի կ'լինի դրականապէս որոշել թէ արդեօք հարկաւոր է պատերազմական միջոցներ գործ դնել և սորա համար միջոց գտնել, թէ կարելի կլինի առանց զօրքի տեղափոխութեան վարվել: Նախարարութեան ստացած տեղեկութեամբ Սերբիան վճռել է եգուց 6-ին (18-ին) նոյեմբերի յայտնելու պատերազմ Տաճկաստանին: Առաջին զօրաբաժինը պատերազմ կերթայ իրան իշխան Միլանի անձնական հրամանատարութեան ներքոյ: Գեներալ Սկոբելեվ երկրորդի առաջապահ զօրքերը յիրաւի երեւեցան Սերբիայի սահմանի մօտ Պանդիրալյում, և որ Tagblatt-ի խօսքերով այս դէպքը ուրախութեան զգամունք զարթեցրել է բոլոր սահմանի մօտ եղող սերբիական գիւղերում: Սերբերը սահմանի գծից դէսը ռուս զօրաց համար պատրաստում էին հացկերոյթներ:

Վիեննա 6-ին (18-ին) նոյեմբերի: Կ. Պօլսում շատ դըժգոհ են Սուլէյման փաշայից. նա չէ կատարում գլխաւոր խորհրդարանի հրամանները. խօսում են, որ կամենում են նրան փոխել: Խորհրդի վերջին նիստում իրան Սուլթանի նախագահութեամբ քննվում էին միջոցները, թէ ինչպէս փութով զօրացնեն Մեհմէտ—Ալիի բանակն, որին հրամայած է շուտով օգնութիւն հասնել Օսման փաշային և ազատել նրան:

Երկու բանակների յարաբերութիւնը պահպանում են գիւղացիք, որոնք գիշերով լողալով անցնում են Վիդ գետը:

Միդհատ փաշան Սուլթանին գրել է նամակ զգուշացնելով նրան, որ ուղղակի անմիջապէս խաղաղութիւն չանէ, խորհուրդ տալով ոչինչի ձեռնամուխ չլինել առանց տէրութեանց գործակցութեան: Սուլթանը նամակը յանձնել է Էդհէմին: Tagblatt-ի խօսքերով Աւստրիան յայտնել է Պարադղին, որ նաւահանգիստների հարցը չէ կարող վճռվել զէնքով, որովհետև նա շօշափում է տէրութեանց շահերը:

Վերան—Բայէ 7-ին նոյեմբերի: Պաշտօնական հեռագիր:

Յարձակումն Կարսի վրայ եղաւ հարաւ— արևելեան ամրոցների կողմից, միևնոյն ժամանակ միւսների դէմ ցոյցեր անելով: Հաֆիս, Քանլը և Սուվարի ամրոցները առնվեցան յարձակմամբ զօրքերի, որոնք այստեղից մտան քաղաքը: Կարադաղին և Արաբին տիրեցին յանկարծակի կամաւոր զինուորները, առաջինի վրայ եւեւից, իսկ երկրորդին վրայ առաջևից յարձակելով: Նաւաստեան մնացեալ ամրոցների պահապան զօրքերը փորձեցին փախչել լեռները, միայն շրջապատվեցան և գերի առնվեցան: Ռուսաց յաղթանակն են. 10 հազարից աւելի գերի, մօտ 300 թնդանօթ և մեծ քանակութեամբ պաշար: Հիւանդանոցներում գտնված է մօտ 4500 վիրաւորված և հիւանդ: Ռուսաց կորուստը մօտ 2500 սպանած և վիրաւորված է:

Փարիզ 5-ին (17-ին) նոյեմբերի: Պատգամաւորաց ժողովը որոշել է երեքշաբթի կազմել ելեւմտից յանձնաժողով:

Երկուշաբթի 7-ին (12-ին) նոյեմբերի ծերակոյտում կ'քննվի աջ կողմի առաջարկութիւնն այն միջոցների մասին, որ մտադիր է գործ դնելու կառավարութիւնը աչքի առաջ ունենալով պատգամաւորաց ժողովի որոշումն անելու պարլամենտական քննութիւն այն չարագործութեանց, որ գործվեցան ընտրութեան ժամանակամիջոցում:

31-ին հոկտեմբերի Կ. Պօլսից Վիեննայի Politische Correspondenz լրագրին գրում են.

«Պատերազմի Տաճկաստանի համար անյաջող ընթացքը աւելի և աւելի զօրացնում է խօսակցութիւնը միջամտութեան և խաղաղութեան վերաբերութեամբ: Թէև կարելի է նրաշխաւոր լինել, որ այդ մասին մինչև ցայժմ չէ եղել դեսպանական բանակցութիւն, միայն այստեղ հաւանական են համարում, որ շուտով կդառնան դէպի Բարձրագոյն Դուռը և կանեն միջնորդութիւն և առաջարկութիւն այս մասին: Տարակոյս չկայ, որ պատերազմի ներկայ վիճակում Տաճկաստանը կմերժի ամեն միջնորդութիւն խաղաղութեան համար: Այս մասին համոզված եմ ես այն խօսակցութիւններից, որ ունեցայ մի քանի բարձրաստիճան Տաճիկ պաշտօնատարների հետ Կ. Պօլսում: Սոքա խոստովանեցան, որ Մուխտար փաշայի կրած ջարդը հաւասար է ճգնաժամի. միայն աւելացրին. որ միթէ Ֆրանսիացիք Սեդանի հարուածից յետ չշարունակեցին պատերազմը և չորոշեցին պատերազմելու մինչև վերջին հնարը:

Մենք զարմացրինք Եւրոպան— ասում էին այս պաշտօնականները— մեր քաջութեամբ պատերազմական արհեստով և մեր միջոցներով. մենք առաջին անգամ ստիպեցինք Ռուսներին յարգել մեզ. մենք կպատրաստենք Եւրոպայի համար զարհուրելի և սարսափելի անակնկալ ընծայ, եթէ Եւրոպան իւր փորձերում խաղաղութեան վերականգնման համար, կճանաչէ և կընդունէ մեզ յաղթված: Այս միջոցին միայն երկու դէպք կարող են պատահել— կամ խաղաղութեան պայմանները կլինին շատ թեթև Տաճկաստանի համար ուստի և Ռուսաստանը նրանց բաւարարիչ չի համարիլ և կամ նոքա կլինին շատ ծանր և Տաճկաստանը կմերժէ նորանց: Այս վերջին դէպքում Տաճկաստանը իւր երկրի և կեանքի թշնամեաց դէմ սանձարձակ կանէ մոլեռանդութիւնը, բանալով մարգարէի դրօշակը, կզոհէ յետին միջոցը ու զինուորը և եթէ նրան չի յաջողիլ յաղթել, գոնէ կընկնի փառքով և պատուով:

Այսպէս են խօսում բոլոր Օսմանցիք: Սրանից կարող էք հետևացնել, թէ ինչպէս մեծ է գրգռումն և համոզվել, թէ որքան էլ մեծ լինին ներկայ հանգամանքներում միջամտութեան առիթները— սոքա չեն կարող յաջող ելք ունենալ, եթէ նոցա հիմն չի ընդունվիլ պատերազմից առաջ եղած վիճակն իրերի: Իբրեւ այս վիճակը կարող էր փոխվել միայն մեծամեծ անյաջողութեամբ Բարձրագոյն Դրան համար Ռումելիայում. որովհետև այս հանգամանքը զիջող կանէր Տաճկաստանը: Այստեղ լինում են պատրաստութիւնք շարունակելու պատերազմը մինչև յետին միջոցը: Այս կարծիքի է նախարարների մեծ մասը: Սոցա շարքում մանաւանդ պատերազմասէր երևում է մեծ եպարքոս Էդհէմ փաշան: Նա մինչև անգամ խօսք լսել չէ ուզում խաղաղութեան և միջնորդութեան մասին: Եթէ այս քաղաքականութեան մէջ փոփոխութիւն կլինի, առաջին նախարար Էդհէմը հրաժարական կտայ: Նորա հրաժարականը կարող է համարվել Տաճկաստանի կողմից խաղաղասիրութեան նշան»:

Կ. Պօլսից 31-ին հոկտեմբերի հեռագրում են Վիեննայի Politische Correspondenz լրագրին.

Զինուորական խորհրդում, Սուլթանի նախագահութեամբ որոշվել է անյապաղ զէնքի հրաւիրել թէ այս տարուան նորընտիր զինուորներուն և թէ մուստահաֆիզ ու րեդիֆներուն: Մօտաւորապէս սոքա կկազմեն 300,000 հոգի: Զինուորական նախարարութիւնը պատրաստութիւն է տեսնում նոցա զինաւորելու և հագցնելու համար:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Գանձակից գրում են. Գաղթականների դըրութիւնը թէ որքան վատթար է, այդ անտարակոյս ամէն մի հայի յայտնի է. նոյնպէս և յայտնի է, որ ամեն քաղաքում իբրանց կարողութեան չափ օժանդակութիւններ եղան: Այս դէպքում պակաս չցանուեցաւ և՛ Գանձակը թէ դրամ և թէ չորեղէն նուիրելում. ժողոված հանդերձեղէնը, լսում ենք, որ յանձնել են մի քահանայի, որ տանի Նորին Վեհափառութեան: Ճանապարհորդ քահանային, ասում են, որ տուել են և ճանապարհածախս ի հաշիւ գաղթականների ժողոված դրամոց: Մեր կարծիքով ներելի չէ այս տեսակ կարգադրութիւնը. քանի որ հանդերձեղէնը կարելի էր կամ գնացողի ձեռքով և կամ փոստով առաքել յանուն Երևանու յանձնաժողովոյն— ուր մնայ, որ այն մի քանի ռուբլի ճանապարհածախսը շատ թանգ է ներկայումս մեր գաղթական եղբարց համար:

Նոյն տեղից մեր բարեկամներից մէկը գրում է. Սրբազան Առաջնորդը գրաբար լեզուի դասատուութիւնը մեր դպրոցներում անհրաժեշտ համարեց, աշխարհաբար լեզուին այնքան կարևորութիւն չտալով Սրբազան հայրը խօսելով նոր լեզուի վերայ ասաց «մենք նորը դեռ չունինք, որովհետև դեռ ուսումնականները վճռել չեն», թէ որ նահանգի. կամ գաւառի լեզուն է մեր աշխարհաբարը, ուստի և պիտի Պալասանեանցի քերականութիւնը վերցնեմ մեր դպրոցներից, վասն զի Պալասանեանցը ինքն ևս խոստովանում է այս մասին և ասում. ինձ ստիպեցին զոռով գրել այդ քերականութիւնը— ես էլ ճարահատուած գրեցի»:

Ագուլիսից պ. Զ. գրում է. «Վաղուց է Ագուլեցիք ցանկանում են տղայոց ուսումնարանին կից արհեստանոց հիմնել, միայն ուսումնարանի նիւթական պակասութեան պատճառով չեն կարողանում իրագործել իւրեանց բարի ցանկութիւնը: Մեր Ագուլիսի հասարակութիւնը ունի 2000 թէ էլ աւելի, ճիշդը չգիտեմ, աղքատաց համար ժողոված գումար, որը այժմ գտնվում է եղբ. Հ. և Մ. Արասխանեանցների մօտ տոկոսիքով: Թող այդ գումարով հիմնեն արհեստանոց աղքատ աշակերտների համար, դա ամենալաւ միջոցը կը լինի աղքատներին օգնելու: Ես վերը ասացի գումարի որքանութեան ճշդութիւնը չգիտեմ, պատճառ որ ահա քանի տարիներ են անցել և մեծ. եղբ. Արասխանեանցները ոչ մի անգամ էլ հաշիւ չեն ներկայացրել հասարակութեանը:

Նոյնը գրում է. «Մշակի» ներկայ 77 թուի 32-դ համարում տպուած Յ. Տէր Գրիգորեանցի «Որդու հարսանիք» վերնագրով հետաքրքիր վիպասանութիւնը դարձրեց իւր վրայ մեր Ագուլեցիների ուշադրութիւնը և երկար միջոց ամենի բերնից լսվում էին վիպասանութեան նախադասութիւնները: Այդ վիպասանութիւնը կարդալուց յետոյ միայն նոր մեր Ագուլեցի աղաներից մի քանիսը, որ անցեալ տարի ամենաջերմ պաշտպան էին հանդիսանում Յ. Տ. Գրիգորեանցին ուսումնարանում պաշտօն տալու համար, ճանաչեցին վիպասանութեան հերոսին ով լինելը, և նոր միայն հասկացան իւրեանց սխալմունքը:

Գանձակից հաղորդում են. Հոկտեմբ. 30-ին կիւրակի օրը Գեր. յաջորդը եկեղեցումը յայտնեց ժողովրդեան, որ հոգան նոր հոգաբարձուներ ընտրել երկսեռ դպրոցաց համար, զգուշացնելով, որ ներկայ հոգաբարձուաց պէս լինին ընտրած մարդիկը: Մենք չգիտենք սորանով ինչ էր կամենում ասել մեր հայր սուրբը: Բայց մեր կողմից պատիւ ենք համարում խնդրել Գանձակու հասարակութեանը ի սէր Աստուծոյ ընտրել այնպիսի անձինք այդ վսեմ պաշտօնի համար, որոնք ընդհանրութեան գործը իրանց սեփականութեան չեն զոհիլ...

Բանանց գիւղի դպրոցը արդէն փակուած լինելով մի քանի պարոնների շնորհիւ, խեղճ գիւղացիք թափառում են Գանձակում իւրեանց երեխայոց դաստիարակութեան սաթիւ: Այս օրերում նոյն գիւղացի մի պարոն դիմել է տեսուչ Եպիսկոպոսեանցին, իւր որդուն ընդունելոյ մասին Գանձակու դպրոցում: Զգալի է եղել գիւղացու յայտնած ցաւը դէպի իւրեանց գիւղի դպրոցը: Գիւղացի պարոնը անբաւական լինելով այս մասին հոգաբարձուներից յայտնել է տեսչին, որ իրանց երեխայոց յետադիմութեան, ուսումնարանի փակման պատճառը նոքա են. «դաստի էնպէս են անում, որ մեր ըրեխեքը առանց ուսումի մնան. է՛ թաք իրանցը կարդան— նրանց հետի ինչ կայ, ունևոր մարդիկ են, գեանջումն էլ են կարթըղնում, մեր դարդ քաշի, որ էս ձուն ձմեռը չեմ ըմանում աղն ու հացը իրար քցեմ, թա ըրխիս կրթցնիլ տամ»: Ահա թէ ինչ են անում սակամները: Հրաւիրում ենք թեմական վերատեսչի ուշքը այս կարևոր հարցի վերայ:

Պ. Զ. գրում է Ագուլիսից. Ագուլիսում միայն մի բան կայ մխիթարական. դա յարգելի տանուտէրի կառավարութիւնն է. Ոչ մի ժամանակ Ագուլիսը վարչութեան կողմից այնպէս բարեկարգված չէ եղել, ինչպէս պ. Յ. Կոստանդինեանցի ներկայ տանուտէրութեան միջոցին: Յարգ և պատիւ այդ պարոնին, որ իւրեան բոլորովին նուիրել է հասարակութեան բարեկարգութեան: Եթէ ներկայումս ժողովուրդը չգնահատէ էլ դրա գործունէութիւնը, բայց թող պ. տանուտէրը գիտենայ, որ ապագան պէտք է անմահացնէ Ագուլիսի պատմութիւնում նորա անունը:

Նոյնը գրում է. Ագուլիսում առ հասարակ պաշարեղէնների գները թանգանում են. ցորենի փութը արժէ 75—80 կոպ. իսկ օղին, որ գլխաւոր արդիւնաբերութիւնն է Ագուլիսի, փութը ծախվում է 4 ռ.—50 կոպ. կամ 4 ռ. 80 կոպ. այնինչ անցեալ տարի մինչ վեց մնթ. ծախվում էր:

Մեզ հաղորդում են Գանձակից ուրախալի լուր, որ մեծ. թեմական վերատեսուչը մօտերքումս գնալով Գանձակ իւր կարգադրութիւններով կարողացել է համոզել մեծ. պ. Եպիսկոպոսեանցին շարունակելու իւր տեսչական պաշտօնը հայ դպրոցներում: Պ. Եպիսկոպոսեանցը յանձն առել է տեսչութեան հետ և շաբաթական 15 դաս ձրի տալու:

Ագուլիսից հաղորդում են. Ագուլեաց ուսումնարանը ունի ընթերցարան, ուր ստացվում են թէ Հայերէն և թէ Ռուսերէն լրագիրներ, օրագիրներ, միայն ցաւալին այն է, որ միայն պ. պ. հոգաբարձուք են օգուտ քաղում այդ լրագիրներից, փոստից ստանում են և մինչ մի կամ երկու շաբաթ իրանց տներում պահում են և այնուհետև ուղարկում ընթերցարանը. անգամ ուսուցիչներն էլ զուրկ են մնում լրագիրներ կարդալուց: Միթէ հոգաբարձուք չունին կարողութիւն անձամբ ստանալու լրագիրներ:

Նոյն տեղից հաղորդում են. Ագուլիսի հարուստ պարոններից ոմանք փոխանակ իրանք էլ ստանալու «Մեղու», «Մշակ» միշտ ուրիշի ստացածներից են օգուտ քաղում: Նամակ բաժանողին խաբում են ասելով, որ այսինչ պարոնը ինձ իրաւունք է տուել իւր անուամբ ստացված «Մեղու» կամ «Մշակը» ես ստանամ կարդամ և յետոյ իրան վերադարձնեմ. այսպէսով ձեռք են բերում ուրիշի թերթերը կարդում, իսկ նոյն իսկ թերթի տէրը 2, 3 օրով մնում է առանց լրագրի:

Նոյն տեղից հաղորդում են. Ագուլեցի եղբ. Տէր Միքայելեանցները մտադիր են իւրեանց հաշուով Ագուլեցի ամուսնացած երիտասարդներից մէկին իւր կնոջ հետ ուղարկել Գերմանիա որ այնտեղ պատրաստուին մանկավարժական ուսումնարանում, և ապա վերադառնալով Ագուլիս պաշտօն վարեն տեղական երկսեռ ուսումնարանում, որոշեալ պայմանով: Եղբ. Տէր Միքայելեանցները իւրեանց բարի գործունէութեամբ կամենում են առաջին օրինակը լինիլ Ագուլիսում:

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻԶԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ
կ'ներկայացնվի
ԱՅՍՕՐ ՇԱԲԱԹ ԱՄՍՈՅՍ 12-ԻՆ
ՖԱՈՒՍՏ
Օպերա հինգ գործողութեամբ:

ԿԻՐԱԿԻ ԱՄՍՈՅՍ 13-ԻՆ
ՎԻԼՀԷԼՄ ՏԵԼԼ
Օպերա չորս գործողութեամբ
եւ
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՄՍՈՅՍ 16-ԻՆ
յօգուտ ՄԱՆՉԻՆԻԻ
նոյն ՎԻԼՀԷԼՄ ՏԵԼԼ օպերան
Ներակտի ժամանակ պ. Մանչինին կերգէ առաջին անգամ մեծ արքա Դոն Կարլոս օպերայից:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 11-го НОЯБРЯ 1877 г. Типографія А. Энфіаджіанцъ и К-° Տուն Բժշկապետ Մ. Ռոտինեան